

Խմբ. — Վ. Հ. Սրապիոն Վ. Ուլուհոճյանի ընդհ. Աբրահայր	225
Խմբ. — Գերգ. Փր. Աղաճանեանի տիտղոսաւոր եպոս. Կոմանայ	228
Հայկական Տեմարան	
Հացոռնի Հ. Վ. — «Ուղղագրութիւն և և առողջանութիւն հայերենի» վերջին աշխատութեան մասին	229
Գրական	
Երեւեան Հ. Սիւնն. — Հրանտ Ասատուր . 234	
Սոֆեան Վահրամ. — Մանածի թել (քերթ)	251
Յովհաննէսեան Հ. Վ. — Օտարութեան մէջ մեռաւ (Ֆրանսացի զինուոր մը) (քերթ) . 275	
Թերզեան ընտանեաց ալբոմը	245
Գրախօսական	
Հ. Վ. Յ. — Երգ երգոց (Ոստանիկի) . 275	
Գեղարուեստական	
Յովհաննէսեան Հ. Վ. — Յ. Աճէմեանի չորս նկարները (Սամ. Մուրատեան Վարժարանին մէջ)	252
Գիտական	
Անդրեասեան Վազգէն ձարտ. — Օգային պատերազմը	240
Թատրոն	
Երեւեան Արամ. — Ռուսահայ թատրոնի պատմութիւնը	257
Կենսագրական	
Սմբատ Բիւրատ. — Լեոնականի մը յուշատետրը (ինքնակենսագրութիւն)	246
Ազգային քրոնիկ	
Ամսվերջի հանդէսներ Միթիթարեան վարժարաններուն մէջ .	
Խմբ. — Սամ. Մուրատեան (Սեւր)	276
Տ. Լ. — Միթիթարեան վրժին. (Երուսաղէմ)	279
Հոկեմ. — Խորհրդային Հայաստանի մշակոյթը (Լրաբաղ)	284
Ուկոյ Ա. — Ազգ մը որ Կ'արշաւէ դէպ ի արդիացում՝ Հայաստան. (Թրգ. Խալէ) . 288	
Մահագրութիւն	
Խմբ. — † Երբ. Պետրոս Լաֆոնթէն Պատրիարք Վենետիոյ	280
Խմբ. — † Գեր. Կարապետ Մ. Վ. Պատուհան մեծաւոր Զմմառեան միաբանութեան . 283	

Réd. — Le Rév. P. Sérapion Dr. Oulouhadjian Abbé Général de la Congr. Mékhithariste	225
Réd. — Mgr. Fr. Agadjanian évêque . 228	
Académie Arménienne	
Hatsouni P. V. — Les critiques sur mon œuvre: «L'Orthographe et la prosodie de la langue Arménienne»	229
Littérature	
Erémian P. S. — Hrand Assadour . 234	
Sofian V. — Fil de pelote (poésie). 251	
Hovhannessian P. V. — A un soldat français (mort dans le pays étranger) . 275	
L'album de la famille Terzian	245
Recensions	
P. V. H. — «Cantica Canticum» (par Ostanigh).	275
Beaux-Arts	
Hovhannessian P. V. — Les tableaux du peintre H. Adjémian (dans le collège S. Moorat, à Sèvres)	252
Science	
Andréassian V. Ing. — La guerre aérienne	240
Théâtre	
Erémian Aram. — Histoire du théâtre des Arméniens en Russie	257
Biographie	
Sempat Burat. — Les mémoires d'un montagnard (Autobiographie)	246
Chronique	
Fêtes de fin d'année dans les Collèges Mékhitharistes.	
Réd. — Collège S. Moorat (à Sèvres). 276	
L. D. — Collège Mékhithariste (à Jerusalem	279
Hoghen. — La culture de l'Arménie bolchévique	284
Ugol A. — Una nazione in marcia verso la modernità: l'Armenia	288
Nécrologe	
Réd. — † Le Cardinal Pierre La Fontaine Patriarche de Venise	280
Réd. — † Le Rév. P. Garabed Badouhassian, Supérieur des Pères de la Congr. de Bzommar	283

ԲԱՉՄԱՎԵՊ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ — ԳՐԱԿԱՆ — ԳԻՏԱԿԱՆ — ԲԱՐՈՑԱԿԱՆ

ՅՈՒԼԻՍ-ՕԳՈՍՏՈՍ — ԹԻԻ 7-8

ՀԱՏ. Ղ. Գ. ՌԵԶԴ. ՌԵԶԵ

ՎԵՆԵՏԻԿ Ս. ՂԱԶԱՐ

Վ. Հ. ՍՐԱՊԻՈՆ Վ. ՈՒԼՈՒՀՈՃԵԱՆ

ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԱՔԲԱԶԱՅԻ

ԵՐԿՈՒՔՈՒԿԵՍ զար առաջ, մեր ցեղին զարաւոր պատմութեան ամէնէն թախծազին և յուսակաւոր շրջանին, Սեւանի սըրբարանին խորհրդաւորութեան մէջ արարչագործ «Եղիցի» մը կը հնչէր:

Ու մենաւոր կղզին, այդ հինաւորաց ճգնարանը՝ Սինան կը դառնար Հայութեան, ուր Միթիթար, ինչպէս Մովսէս, պատգամ կը ստանար Կուսական բերնէն՝ գլուխ անցնելու մէջ վայրաժատին ու կորսուած ժողովրդեան և իրագործելու իր հոգեւոր մէջ յղացած խորհուրդը՝ Հայ ազգին հոգեւոր և մտաւոր վերածնունդը:

Երկար ու տառապալից ուղեւորութենէ մը վերջ՝ Միթիթար կտրելով ծով ու առաջադիմ զարձակ մենաւոր կղզի մը կը գտնէր իբր հանգրուան իր ցեղին, տաճար հայ ազգին բովանդակ նուիրական սրբութիւններուն:

Հեռաւոր, մենաւոր ու փոքրիկ Ս. Ղա.

ԲԱԶՄ. ՅՈՒԼԻՍ-ՕԳՈՍՏՈՍ 1935

զարը ընդ փոյթ վերացած ու բարձրացած Սողոմոնեան ոսկեղրուազ տաճարին նման՝ Հայ ազգին ոսկի զարեւու փառքը կը վերածնէր Միթիթարայ լուսապայծառ հոգեւոր կենսատու շունչով. ու Երկինք իր հովանին ու իր օրհնութիւնը իբրեւ կամար, իբրեւ պարիսպ անոր համար կը շոյալէր:

Ուստի, ի զուր շնչեցին մոլեգին հոգմեր, ի զուր փրփրերախ ալիքներ բախեցին անոր որմերը՝ որ անյայթ վիմին վրայ հաստատուած էին: Կուսական պատգամը միշտ ժպտեցաւ Ս. Ղազարի երկրնքին վրայ, ու Միթիթարեան տունը կը շարունակէ խոր հաւատքով դիտել Երկինքը, դիտել հեռաւոր Հայրենիքն ու անոր ցիրուցան բեկորները, կը շարունակէ կրկնել յարատեւ ու անսասան Միթիթարայ ուխտը:

Ու արթուն պահակի պէս Նախախնա մութեան զրկած պահակներ իրարու կը